բանին. եթէ ասիցես վարպետին և կամ մանուկին թէ ընդէ՞ր յամր չարժիս. և ընդ լսելն զայսպիսիս՝ իսկոյն թողու զբանն անկատար և գնայ ի յայլ տեղիս. թէ մուռերքն և թէ տիրկէրքն աւուրչէքն 3, 3 լիարէ է. ոչ դրամ պահել գիտեն և ոչ ջուր խմել, այլ և իբրև զանասուն զրէթէ անդադար ուտեն և ըմպեն... ։ .. Այս խանութի և տան քիրան խիստ թանկ է 100 զօլաթայ, 120, 150. բժիշկն ևս. զոն ոմանք որք մի անգամ գալով՝ զմի ոսկի առնուն և ոմանք 1 զօլաթայ։ Կովու մսի օխան 8 սոլտի է, հորթու միսն 16, ոչխարին 8, ճիյէրն 3, 4 սօլտի։ Հացն լաւ է, պտղեղէնն սակաւ է, պարտախ էրիզին աժան է, խնձորն ևս։ Ձմերուկն առատ է և սեղն նուազ։ Գոյ գինի որ օխան 10 սոլտի է, գոյ գինի որ 15, 20 սոլտի է, սալաթան պակաս չէ։.. սավայի ջուրն խիստ վատ է, թունայուն միջակ, և ճէնոալի աղբեր ջուրն լաւ է ասեն...։

Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Յամի Տեառն 1732
Յօգոստոս 30 [Պելկրատ]

ԽԵ.

Պատմական բաժնին զասելի ահա փոքր նամակ մը, զոր Պոլսէն կը ղրկէ Հ. Պօղոս Վ. Սիմոնեան։

Գերայարգեցելոյ տեառն տեառն Մխիթարայ Աբբայի
Հօր մերոյ և Աստուածաբանութեան վարդապետի

... Վեց նաւք Վէնէտիկու զոն աստէն, ասեն թէ յետ մեծ բարեկենդանին չուեն աստի ի յծովն. բայց թուի ինձ, թէ յամեն աստէն մինչև ի Զատիկ. քանզի Հէզայրցւոց եօթն նաւք եկեալք ի Ֆօչայ, որոց չորք նաւքն մտեալք են ի ներքս պօղաս հիզարու առ ի բերել զընծայս թագաւորին տաճկաց, և առնուլ ի նմանէ զօգնութիւն և դառնալ գնալ յերկիրն իւրեանց. ուստի որքան սոքա յամին աստ, և այնքան յամեն նաւքն Վէնէտիկցւոց հանդերձ ամենայն պատրաստութեամբ. քանզի Հէզայրցւոց մուֆտին յետ անեցման վարհանին ի յըսպանեացւոց եկն ի ստամպօլ ցամաքաւ զայն վերոյ գրեցեալ շնորհսն էառ ի թագաւորէն տաճկաց։.. Յաւուր միում գնացի ի սուրբ Անդօնի վանքն առ ի տեսանել զՅօհան վարդապետն, և գտի զնա արարեալ զմեծ խրախճան վասն այցելուին և կարգաւորացն սուրբ Անդօնի վասն շինութեան նորակերտ բնակարանին իւրոյ, զոր շինեաց վասն բնակութեան իւրոյ մինչ ինքն կենդանի է, յետ մահուան մնալ մենաստանի սուրբ Անդօնին...։

Գերյարգութեան ձերում

Նուաստ ծառայ ս. տ. ս
Հ. Պ[օղոս] Վ[արդապետ]

(ի Ղալաթեայ)
Յամի Տեառն 1733
և փետրուարի 6

ԽԶ.

Պարսիկ—Օսմանեան ճակատամարտի մը մէկ ընդհարումն է որ կը ներկայացուի մեր հետագայ նամակին մէջ՝ մանրամասն պարագաներով։ Այս նամակը գրուած ըլլալով նշանակուած տարւոյն մայիս 9ին՝ նամակագիրը բնականաբար կը հասցնէ մինչև Օսմանցւոց վերջընթեր պարտութեան վախճանը։ Վճռական համարուածը տեղի կ'ունե-